Այդպիսով Եարասալաւի բարի դիտաւորութիւններն այն հեռաւանքը կունենան, որ առանց այն էլ նախանձելի կեանք չունեցող գիւղական հոգևորականներին գուր տեղը կրսկսեն մեղադրել և յանդիմանել նաև աւելորդ և անտեղի դանդատների համար, օր. մի տեղ ուսուցչին կը հեռացնեն հաբբեցութեան պատճառով, իսկ նա կը յայտարարի, որ քահանայի դաւաճանութիւնն է նրան հեռացնելու պատճառը: Մի և նոյն ժամանակ պէտք է ի նկատի ունենալ, որ վերահսկողութեան իրաւունքը տեղիք կը տայ բազմաթիւ դեղծումների և իբր անձնական հաշիւներ մաքրելու միջոց կծառայի»:

Բրնատոնէական պարտաւորութիւններն անթերի կատարելը, ինչպէս և պահեցողութիւնը, պէտք է հիմնուած լինին համոզմունքի վրայ. պէտք է ի ներբուստ բխեն և ոչ թէ արդիւնք և հետևանք լինին հսկողութեան և շրջաբերականների: Համոզեցէք, հասկացրէք պահեցողութեան հիմքն և նշանակութիւնը և հաւատացած եղէք որ մարդիկ կը զղուին կենդանիների միսն իբրև կերակուր գործածելուց:

---

## ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Գերմանական կայսեր քաղաքականութիւնը կրծնէլ իրեն նպատակների գործիք դարձնելու՝ վաղուց յայտնի է նրա կատարած մի քանի ճանապարհորդութիւններից դէպի Իտալիա և Երուսաղէմ: Վճռելով օգուտ քաղել այն բոլոր տարբերից և դէպքերից, որոնք կարող են օգտակար լինել գերմանական զօրութեան, կայսրը՝ բողոքական երկիրների կայսրը, միշտ էլ աշխատել է պաշտպան հանդիսանալ Արևելքում կաթոլիկութեան և թուլացնել Ֆրանսիայի հեղինակութիւնն ու վարկը կաթոլիկութիւն պաշտպանելու գործում: Նորութիւն չէ այն երևոյթը, որ Եւրոպական իշխանութիւններն երբէք առիթը ձեռքից չեն բաց թողել եկեղեցին իրենց քաղաքական նպատակներին ծառայեցնելու: Ֆրանսիան է, որ կռիւ է սկսել կաթոլիկ միաբանութիւնների դէմ և հետզհետէ զրկում է նրանց կրթական գործունէութեան մէջ ունեցած ազդեցիկ մասնակցութիւնից: Գերմանիան յատկապէս այս դէպքից էլ օգուտ քաղել կամենալով, անցեալ ամսին ընդունեց մի օրէնք, որով թոյլատրեց եզուիտների մուտքը Գերմանիա: Անշուշտ Գերմանիայի այս քայլը մեծ նշանակութիւն կունենայ Ջերմեռանդ կաթոլիկների համար և այ-

սուհեան նրանք աւելի գերմանիայի կողմ կը կոկսեն դարձնել իրենց հայեացքները, քան թէ դէպի Ֆրանսիան, որը շատապեց յայտնել, որ անփոփոխ է պահում իւր քաղաքականութիւնը Ֆրանսիայից դուրս եղած կաթոլիկների վերաբերութեամբ և խոստովանեց, որ արևելքում ֆրանսիական ազդեցութիւնը տարածելու դործում կաթոլիկ միսսիաներն և դպրոցներն ահագին դեր են կատարել։ Ամենս որ եկեղեցին էլ սկսել է աւելի շուտ քաղաքական նպատակներին ծառայել, քան Աւետարանի ճշմարիտ սկզբունքներին։

—Ֆրանսիական կառավարութեան հակակաթոլիկական ուղղութիւնն արտայայտուեց վերջերս և մի անսովոր կարդադրութեամբ. դատարաններից հանեցին Փրկչի խաչելութեան պատկերն ու խաչը։

Այս առթիւ կարդինալ Ռիշարն հետևեալ շրջաբերական նամակ է ուղարկել բոլոր քահանաներին.—

Պարոն Կիւրէ (քահանայ). ախուր զդացմունքով լցուեց մեր սիրտն, երբ Փրկչի սուրբ յարութեան տօնին իմացանք, որ դատարաններից արտաքսել են խաչելութեան պատկերը։

Խաչը քրիստոնէական նշան է (հանդանակն է)։

Երկար դարերի ընթացքում քաղաքակիրթ ազգերը խոնարհւում էին նրա առաջ՝ որպէս կրօնական ազգային նշանի առաջ։

Ֆրանսիան քրիստոնեայ—կաթոլիկ երկիր է։ Նա ցնցուած է. նա զդում է անյաղթելի մի կարիք դիմելու՝ Աստուծուն և ապաստանելու իրեն, որ դեռ նրա մէջ չի մեռել հաւատը։

Լինում են հանդիսաւոր վայրկեաններ, երբ քրիստոնէի խիղճը վրդովւում է՝ իր համոզմունքներն ու ամենալաւ յոյսերն անպատուաստնկատելով։ Այդպիսի դէպքերում պէտք է հանդրստացնել խիղճն և արիանալ։ Մարդուս բոպէապէս վրդովուած միտքը հանդստութիւն է դտնում յիշելով, որ Աստուած միշտ ներում է մեղքերը, պարդևում եռանդ և խաղաղութիւն՝ դանազան հակասական խնդիրներ լուծելու դործում։

Ողորմածութեան աղօթքում, որն ուղղում ենք երկինք ներողութեան և գթութեան համար դէպի այն անձինք, որոնք վիրաւորել են ամենասուրբ զդացմունքներ, աղաչում ենք դարձնել մոլորուած սրտերը դէպի ճշմարտութեան ուղին, մենք պարտաւոր ենք արձագանք տալ քրիստոնէական և ֆրանսիական հոգիներին ներկայումս և նրանց համար որոշել հէնց այդ առանձնակ աղօթքներ։

Այս պատճառաւ մօտակայ կիւրակէ օրը բոլոր եկեղեցինե-

ըում կարդալ Miserere աղօթքը Tantum ergo-ից առաջ և այդ աղօթքից յետոյ երկու կրկնել «Cor. Jesu socraissimum miserere nobis և Cor. Moriae Immaculatum. Ընդունեցէք յարգելի տէր հայր հաւատամի խորին անձնուիրութեանս Տեառն մերում։

Մենք չենք խօսում կատարուած տխուր դէպքի մասին, որն աւելի մեծ ցաւ պէտք է ազդի քրիստոնէի սրտին, եթէ այդ քայլն ուղղուած է հաւատոյ և ոչ միայն պատկերների դէմ, այլ մեզ հիացնում է կարդինալի պարզ և անպաճոյճ լեզուն և իշխանական յոխորտանքից, հակաքրիստոնէական՝ ոտիկանական դարձուածներից ազատ շրջաբերականը։ Խորին կերպով հաւատում ենք, որ երբ ո. կարդինալի և նրա քահանայից գործն էլ նոյնքան աւետարանական կը դառնայ, Ֆրանսիայում ուրիշ տեսակ վարմունք ու երևոյթներ կը տեսնենք։

—Մարտի 18-ին, երբ կարդինալների խումբը շնորհաւորում էր պապին նրա անուանակոչութեան տօնի առթիւ, Պիոս պապը ճառ արտասանեց, որի մէջ շեշտեց Ֆրանսիայում տեղի ունեցող տխուր դէպքերի վրայ. շեշտեց միաբանութիւնների վերաբերեալ վերջին օրէնքը, մինչդեռ այդ միաբանութիւնները եկեղեցու փառքն են եղել և հայրենիքի պարծանք յիշեց այդ օրէնքի վատ հետևանքներն ու ասաց հետևեալը. —Մենք ողբում և խորապէս դատապարտում ենք այդ խստութիւնը, որն էականապէս հակառակ է քրիստոնէական ոգուն, երկրի հիմնական օրէնքներին, կաթոլիկ եկեղեցու անխզելի իրաւանց և նոյնիսկ քաղաքակրթութեան կանոններին, որն արգելում է ընկճել խաղաղ քաղաքացիներին՝ որոնք քրիստոնէական դաստիարակութեան նուիրուած, երբէք չեն խուսափում կրելու այն բոլոր պարտաւորութիւնները, որպիսիք կրում են և ուրիշները։ Պապի այս խօսքերը, որոնք իրենց վճռական եղանակով չափազանց տարբերւում են Լևոն XIII. պապի չափաւոր ճառերից, մեծ տպաւորութիւն թողին նախարարութեան պաշտպան ֆրանսիական մամուլի վրայ և նրանց մէջ լոյս տեսան յօդուածներ, որոնցով մեղադրում էին պապին և առաջարկում էին խզել պապական դահի հետ ունեցած յարաբերութիւնները, որովհետև նա մինչամտել է ֆրանսիական ներքին գործերին։ Սակայն լրագրներում լոյս տեսած այն լուրերը, թէ Վատիկանի ֆրանսիական դեսպանը եռանդագին բողոքել է պապի ճառի դէմ, չի արդարանում և Osserratore Romano թերթն անտարբեր է համարում այդ։

---

Ներկայ պապը Լեոն XIII-ի սկսածների շարունակող է ուզում հանդիսանալ ի թիւս այլոց՝ նաև Բիբլիական գիտութեան գործում: Լեոն XIII-ն այդ նպատակաւ յատուկ Բիբլիական մասնաժողով էր հաստատել, որի ներկայացուցիչներին ներկայ պապն ընդունեց փետրուարի 26-ին և մատնանիշ արաւ մի նոր խնդրի վրայ՝ որ նրանք պէտք է աշխատեն պատրաստել կաթոլիկ դպրոցների համար սուրբ գրքի ուսուցիչներ:

---

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Այս տարի լրացաւ «Բրիտանական և արտասահմանեան Բիբլիական նշանաւոր ընկերութեան 100-ամեակը (1804 թ մարտի 7-ին հիմնուած)· Լոնդոնում Մարտի 4-ից մինչև 9ը տօնւում էր «բիբլեական շաբաթը» յօբելէնական տօների մի երկար շարք էր այդ՝ յատուկ պաշտամունքով, որը տեղի ունեցաւ թագակիր անձերի և նրանց ընտանիքի անդամների ներկայութեամբ՝ զանազան ժողովներով ու ցուցարար համախմբումներով ի պատիւ այդ ընկերութեան: Այդ համախմբումների ժամանակ նշանաւոր էր մանկական ժողովը, որին ներկայ էին 12 հազար մանուկներ: Համարեա ամբողջ բողոքական աշխարհը, որ հանդիսանում է «Բիբլեական» քրիստոնէութիւն, միացաւ այդ ընկերութեան հարիւրամեակի տօնախմբութեան· ընկերութեան, որն իւր գոյութեան ընթացքում ահագին ջանք է գործ դրել Աստուածաշունչը տարածելու և բիբլիական միւս ընկերութիւններին իբրև հիմունք ծառայել: Մարտի 6-ը որոշուած էր տօնել բողոքական բոլոր եկեղեցիներում իբրև «բիբլիական կիւրակէ»: Կաթոլիկներն իհարկէ այս հանդէսներից հեռու էին պահում իրենց և նոյն իսկ անգլիացիների մէջն էլ կասկածներ էին առաջ գալիս եկեղեցու պաշտօնական մասնակցութեան վերաբերութեամբ: Մատնանիշ էին լինում այն հանգամանքի վրայ, որ առանց մեկնութիւնների և ծանօթութիւնների իւրաքանչիւր ազգի մայրենի լեզուով Աստուածաշունչ տարածելու գործին նուիրուած ընկերութիւնը—իւր այդ նպատակն իրագործում է բողոքական ոգով: Որ նրա ներկայացուցիչները (colporteurs), հակառակ իրենց տրուած հրահանգի՝ Աստուածաշունչը տարածում են երբեմն հակաեկեղեցական քարոզներով, մանաւանդ կաթոլիկ երկիրներում, «քրիստոնէաներին աւետարանական դարձնելով» և նրանց եկեղեցուց անջատելով: Այս բանով էին բացատրում կաթոլիկ